


ԶԻՆԱՐԻՆ.



Եռնային ցասկոտ վտակի գրկում,
 Մամռոտ ծերաբերում, սլաղ ալիքներում:
 Կանաչ տերեւի վարսով զարդարուն,
 Հալարտ կանգնած էր շինարը սիրուն:
 Դողդոջ տերեւի մեղմ սօսափինով
 Կանգնած էր, ասես՝ տարած խոհերով:
 Նայում էր մեռնող ալ վերջալոյսին,
 Որը փարում էր կապուտակ ծովին:
 Նրան գերում էր այդ յամբ հեռուն
 Իւր կախարդական գաղտնիքով սիրուն...
 Ձինարի տակին, մերթ որոտնդոստ,
 Մերթ գաղտնի հեւքով ծփալով ժայռին,
 Թնդում էր անվերջ վտակն աղմկոտ...
 Մէկ նա երգում էր ցնորքներ մեղուշ,
 Մէկ էլ փրփրում, ծփում լի կրքով
 Եւ մէկ վայրենի կսկիծ հառաչով
 Համբուրում փէրու ոտքերը քնքոյշ...
 Վտակն ասում էր լաց ու կսկիծով.
 «Օ՛, նկ իմ՝ գերկը՝ խղճն ինձ, սէր իմ.
 Ուժեղ ալիքով, իմ՝ զօրեղ գրկում՝
 Քեզ մի դիւթական աշխարհ կտանեմ:
 Նայի՛ր չորս կողմի, քո շրջակայքում
 Բնութիւնն այնպէս սղբատ է, դժխեմ...
 Ստրկունհի ես այստեղ ժայռերին,
 Իսկ այնտեղ կեանք կայ՝ ազատ, ցնծազին,
 Գեղեցկութիւնն է ծաւալում չորս դին...»
 Ու քանի գնաց այնքան համարձակ
 Գրկեց վտակը մէջքը շինարի:
 Կուելու վերջին ուժերը հատած

Ձինարն օրօրեց, անմիտ կըքով լի
 Ընկաւ վտակի գիրկը կատաղած...
 Ու վայրենու պէս, անխնայ հեւքով
 Մատաղ շինարը պսող գրկում՝ սեղմած
 Առաջ սլացաւ վտակն հրճանքով:
 Բայց ճանապարհին, աւազոտ սփում
 Նսալուրս շարտեց մատաղ շինարին,
 Դեռ չհասցրած իւր նպատակին.
 Իսկ ինքը ծածկեց այն անհուն հեռում:
 Ուր վերջալոյսն էր նազանքով մարում
 Ու ծովի կապոյտ ալիքը պարում:

(Թարգմ. В. Л. Величко-ից) Ե. Ս.

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻ.

Դեղնած ու թօշնած, ճ, տերև աշնան,
 Սին, ունայնութեան պատկեր թառամած.
 Մահաշունչ, սարսիչ, սոսկումի նշան,
 Մահ ես շշնջում, մրմնջում կամաց...

Վաղուց չէ, տերև՝ կեանք էիր բուրում,
 Նայում կենսուրախ, կանաչով պատած...
 Իսկ այժմ դողում մահի ճանկերում,
 Սոսկում ես երգում, շշնջում կամաց...

Դեղնած ու թռումած, ճ, տերև աշնան,
 Վաղուց չէ՝ ես էլ կեանք էի երգում...
 Այժմ յուսահատ, թօշնած քեզ նման,
 Սոսկումն եմ յիշում մահւան ճանկերում...

Արամի Տեր Յովսէփեան